

ՊՈՆԱԲԱՐԴ

Ի ժայռն՝ յոր գայ բախի կոհակն ողբաձայն ,
Դիտէ նաւաստն 'ի գոյն ճերմակ 'ի բացեայն
Ըզգերեզման՝ արկեալ ընդ ափն 'ի յալեաց .
Ի վէմն անձուկ՝ չարկ ժամանակն ինչ մըթար .
Ընդ մորենւոյն և բաղեղան հիւս դալար
Զախջախ մականն պարզի աչաց :

Աստէն հանգչի... ոյր չիք անուն... հարց ցերկիր .
Արեան տառիւք անունն հարեալ կայ 'ի գիր
Ի Տանայեայ ափանց ցրսար կեդարու ,
Ի պղինձ , 'ի վէմ , 'ի լանջ կըրծիցըն քաջաց ,
Եւ մինչ 'ի սիրտ իսկ խուժանին ըստըրկաց ,
Զոր կոխէին կառքն ահարկու :

Յետ մեծ անուանցն երկուց , զոր դարձ քարողեն ,
Ոչ բնաւ անուն յածեալ 'ի շուրթն աստ ամէն ,
Ի կայծականց թեւ հեռագոյնս ինչ ճախրեաց .
Ոչ զոր հարեալ շունչն եղծանէ՝ ուր մարդոյն
Յերեսս երկրի հետըս գըծեաց խորագոյն .
Եւ նոյն այն ոտն անդ դադարեաց :

Կայ անդ... երրեակ քայլիւք չափէ զայն մանկիկ .
Ըստուեր նորին չըտայ մըրմունջ իսկ փոքրիկ .
Կոխեն զդադաղան անխըտիր ուր թըշնամոյ .
Բըզզայ ճանճիկն 'ի շանթընկէց ճակատուն .
Ոգի նորուն լըսէ զբարբառ միշտ ըզնոյն
Զալեացն ընդ ժայռըս բախելոյ :

Մի զանգիտեր ոգիդ՝ դեռ ևս 'ի վարան՝
Թէ ընդտոնեմ ըզլուռ քո շուք պերճութեան :
Ոչ նախատեաց երբեք քընարն ըզչիրիմ ,
Մահն ապաւէն փառաց եղև միշտ յամայր :
Մարդոյն ազատ է յիշատակ յայս 'ի վայր .
Ճըշմարտութիւն սոսկ կայ ընդ նմին :

Ըզդամբանաւդ և զխանձարրօք պատեն ամպք .
Բայց դու ելեր 'ի փոթորկէ զերդ կայծակ .
Զէր քոյ անուն՝ և շանթս հեղեր յաշխարհի :
Սապէս Նիլոս , զոյր բերրի ջուրս արբ Մեմփիս ,
Զև անուանեալ՝ յորդէ զգեռուն իւր ալիս
Ընդ անապատըս Մեմնոնի :

Անկան աստուածք, դատարկացան և զահոյք .
Եւ դու ելեր ըզյաղթութեան շոյտ թևովք .
Փառքն եղ ըզբեզ բրուտոսական ազգի պետ .
Դարա՝ յոյր ուղիւնց հոսեալ գնային 'ի փրկութիւն
Բարք, թագաւորք և մեծք... նհանջեալ յիւրն աղբիւր
Ընկրկեցաւ քայլ մի 'ի յետ :

Մարտեար ընդդէմ մոլորութեանց բազմահնար .
Զերդ գոռն Յակովբ ընդ ըստուերի կրօնեցար .
Անկան խուճապքն ընդ ծանրութեամբ մահացուին .
Եւ դու մեծաց անուանցն եղծիւրդ վրսեմ,
Զըւարճացար նորօք, զերդ աջն անօրէն
Պըղծեաց զանօթըս խորանին :

Սապէս չամբուշ ցնորեալ անզօր մոլութեամբ
Մինչ դարըն ծեր պատառէ զինքըն ձեռամբ,
Յերկաթն անդէն աղատութեան բարձեալ ձայն,
Յանկարծ զիւցազն առ 'ի հողոյն յառնէ կայ .
Եւ մականաւն ըզնա հարեալ... զարթնու նա .
Յնորք տան տեղի ճըշմարտութեան :

Օ՛շ, թէ տըւեալ 'ի վաւեր ձեռնն ըզմական,
Եւ զասպարաւդ եղեալ զըսպանդս արքունեան,
Զեռքդ ըզսըրբոյ խուրին ըզկեղտըն սրբէր .
Վեհ քան զարքայսն ախոյենիդ արքայից
Զօր խունկ երկնից բերեալ և թագ ջինջ անբիծ
Փառքն ըզճակատ քո պըսակէր :

Փառք և պատիւ, աղատութիւն, անուանք վեհք,
Քեզ հընչէին զերդ պըղընձոյն թինդ արեկ
Զոյր ձայնն հեռուստ կըրկնէ ապուշ արձագանդ .
Ընդ վայր յականջդ հարաւ բարբառըն լեզուին,
Որում ծանօթն էր սոսկ շաչիւն սուսերին,
Եւ փողոյն ձայն ուժգնահընչակ :

Յօր զարմանայն աշխարհ՝ յոխորտ զայն խոտեալ,
Լոկ տենչայիր յերկրիս բարձին ինքնակալ .
Գնայիր յառաջ... և խոչն էր քոյ թըշնամի .
Կամք քո սրանայր իբրեւ ըզնեա ճախրասլաց,
Որ հարկանէ ըզկէտ նկատեալ 'ի յաչաց,
Թափանց ընդ սիրտըն սիրելի :

Ի զուարթ առնել զարքայականրդ թախիծ,
Բաժակ կոչնոցն ըզբեզ չարար գինելից .
Ընդ այլ բոսոր աչքդ ըզմայլել սիրէին .
Զերդ զօրական յոտին տըքնեալ զինազգեաց,
Եղեալ տեսող գեղոյն ժըմտից լ'արտասուաց,
Ժըպիտք, հառաչք 'ի քէն չեղին :

Քաղցր էր քեզ սոսկ երկաթոյն ձայն և աղմուկ ,
Եւ ջինջ նըշոյլ այգուն շողեալ ըզդինուք .
Աջ քո գրգուէր միայն ղթեթե քո նըժոյդ ,
Յորժամ ծըլանք տըժգոյն բաշիցըն ծածան
Ջարիւնոտ հողն հատանէին հողմանման ,
Եւ զպողովատ փըշըէր ոտիւք :

Աճեալ անդոհ , և անտըրտունջ իսկ անկար .
Ընդ խիտ զրահիւքդ ոչ սիրտ բախէր մարդկաբար :
Չունելով սէր կամ քէն , 'ի խոկըս կէիւր .
Իբրև զարծուի տիրեալ օդոցն ամայի ,
Սոսկ չափէիր ակամբ զերեսըս երկրի ,
Չոր ճիրանամբքդ ընդգըրկէիր :

Միով ոստմամբ վազել 'ի կառս յաղթութեան .
Ըզպերճ փառացն արձակել շանթս յամենայն .
Կոխել զիշխան և զպետ նովին իսկ ոտամբ .
Դարբնել ըզլուծ զանդեալ սիրով և քինու ,
Եւ տազնապել ընդ բըռնութեամբ սանձարկու
Ըզժողովուրդ մի զապրատամբ .

Չողջոյն դարու գրաւել ըզմիտս՝ ընդ կենաց ,
Բըթել զդաշոյն , անյոյս առնել ըզնախանձ .
Խախտել , կանգնել ըզտիեզերս անըստոյգ .
Ի դըժնեայ փայլս օրոտընդոստ քո շանթից
Քսանիցս յերկրի վտանգել ըզբախտ բոլորից ,
Այս միտք էին քո և անուրջք :

Սակայն անկար դու 'ի կայիցըդ բարձանց .
Յամայի ժայռն արկեալ 'ի դու մըրըրկաց ,
Տեսեր զի զքոյ ոսոխքդ հերձին պատմուճան ,
Ու 'ի քէն յանդուզն աստուածօրէն պաշտեալ բախտ՝
Վերջին շընորհ քեզ պարգևեաց ըզվայրդ այգ՝
Չափեալ ընդ գահն և ընդ դամբան :

Ո՛հ . տայր ոք ինձ գոլ խորհըրդոցըդ գիտակ ,
Երբ անցելոյ քոյ մեծութեանն յիշատակ
Ջերդ խըղճի խայթ 'ի լըռութեան քեզ տիրէր .
Եւ մինչ կային բազուկքդ ըզլայն քո լանջօք ,
Ընդ լերկ և մերկ ճակատդ հակեալ մէտ 'ի խոկ
Սահէր սոսկումն իբր ըզդիշեր :

Որպէս հովիւ կացեալ յեղեր խոր ափանց՝
Դիտէ զըստուերն յալիս ծաւալ ձիդ 'ի բաց
Մըրըրկեալ վաակօք ճօճեալ յընթացսըն ծածան .
Սապէս 'ի մեծ շըքոյդ 'ի ծայրն ամայի
Խընդրեալ դու զանձն յանցեալ կենացդ ըստուերի ,
Անքն առաջինք քեզ յուշ անկան :

Անցանէին առ քե հանդոյն յաղթ ալեաց,
Զոյց տեսանեմք ընդ ծով ըզփայլ կատարաց.
Ունկնրդ լրսէր զնոցուն բարբառն հեշտական.
Եւ ըզնըշոյլ փառաց յերեսդ հոսեալ վառ.
Մէն մի կոհակ ածէր պատկեր քեզ պայծառ,
Յոր աչքդ հայէր ընդ ժամն երկայն:

Աստ 'ի կամուրջն յերեր՝ քեզ շանթն ահ չազդէր.
Անդ յուզէիր ըզհող վայրաց սրբբանուէր.
Մռնչեալ խայտայր նըժոյգդ 'ի գետն Յորդանան.
Աստ հարթէին ոտքդ ըզկատար բարձրամուր,
Անդ փոխէիր 'ի գաւազան զանյաղթ սուր.
Աստ... Զինչ սոսկումնդ յանկարծական:

Հիմ ըզխռովեալ դարձուցանես աչս 'ի բաց.
Է՛ր այդ դալուկն ըզբոյ ճակատդ պատեաց.
Զինչ յարհաւիրս յանկարծ տեսեր անցելոյն.
Զաւեր ծխաշունչ ըզբաղաբաց քրսանից,
Կամ ըզմարդկան արիւն 'ի դաշտ փըրփրալից. —
Այլ փառքն եղծին ըզբնաւն ողջոյն:

Բաց 'ի չարեաց՝ փառքն եղծանեն դամնայն:
Բայց մատնն եցոյց ինձ ըզմարմին անկենդան,
Զմանուկ դիւցազն 'ի ջինջ ներկեալ արենէ:
Զուրք զինքն առեալ գնային գային անդադար,
Եւ վրէժխընդիր կոհակն ընդ այն անցեալ յար՝
Անդր արկանէր զանուն Գոնտէ...

Իբր առ 'ի բաց սրբբել ըզնիչ կապուտակ,
Ի ճակատն հուպ տանէր ըզձեռն իւր երազ.
Բայց ընդ մատամբն անդրէն արեանն հետք ծնանէր.
Եւ զերդ դըրոշմն հարեալ աջով գերադոյն,
Անջընջելին կաթիլ թագի իմն հանդոյն
Ըզնա չարեօքնն պըսակէր:

Վասն այն, գոռոզ, փառացդ անկեալ 'ի մրթար,
Զարիքդ յերկբայս ըզբոյդ արկցեն ըզհանճար.
Ըզկնի կառացդ ընդ բնաւ իցեն չիթք արեան.
Անուն քոյին յաւեժ մըրըկաց մատնեալ յար,
Դարուց 'ի դարս ընդ Մարիոս և Կեսար
Տարուբերեալ կայցէ յապայն:

Այլ դու մեռար, սակայն ըզմահ խուժանին,
Իբր ըզհընձողն որ 'ի խընդիր թռչակին,
Զե վարձս առեալ ըզմանդաղաւ իւր նիրհէն.
Ի ժամ մահուդ ըզսուր կապեալ քո յազդեր
Ըզդատապատան և կամ ըզվարձ խընդրեցեր
Ի վեհ ըզբեզն առաքողէն:

Ի հուսկ, ասեն, աւուրս երկայն տաղնապին,
Միայն մըտօքն ելեալ հանդէպ յաւերժին,
Աչքն ամբարձան գոգցես յերկինս անդր՝ի վեր.
Փըրկող նըշանն հանգեալ ի խրոխտ ճակատուն...
Եւս ի շըրթունսն անդէն հընչեաց և անուն...
Զոր աւարտել նա ոչ իշխէր:

Լրացո՛... Աստուած է պըսակող և իշխան.
Նոյն ինքն է տէր պատուհասի և ներման.
Բղդ-իւցազունս և զմեզ կըշռէ նա ուրոյն:
Խօսեաց ազատ որում ըզմիտսըդ գիտէն:
Գերին ու իշխանն՝ օր մի համարու տայցեն.
Սա զմականէն, նա զերկաթոյն:

Դադաղն է փակ. դատեցաւ Տէր. լըռեցէք:
Ի նըժարին կըշռին յանցանքն և հանդէսք.
Մի մերձեսցին ձեռք ապիկար մահացուաց:
Ո՛ւմ, Տէր, զանհուն քոյ գութ քըննել իցէ կար:
Պատուհասն Տեառն, ո՞ իսկ գիտէ թէ հանճար
Մասն ինչ քոյոց չէ մարթանաց:

ԼԱՄԱՐԴԻՆ՝

Թարգ. Հ. Սաւ. Կեսարեան.

ՀԱՅԻ ՊԱՏԱՌԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐԴ

ՆԱՄԱԿ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

(Տես երես 46.)

Կենդանակալն չեքմոռքիշն:

Ուրեմն հիմա ծանօթ է մեզի չնչաւութեան գաղտնիքը. թթուածինը մեր մարմնոյն մէջ ջրածնին և ածխին հետ կը միաւորի:

Սակայն ինչո՞ւ համար, խնդրեմ:

— Անտարակոյս կրակ հանելու համար, որովհետեւ առանց ատոր չմիաւորիր:

— Հապա ինչո՞ւ համար կրակ կը վառեն:

Ջերմանալու համար, անանկ չէ:

Ատոր համար է ահա որ մարմինդ ալ ջերմէ, անանկ ինչպէս սեղանատան վառարանը, ուր օդուն թթուածինը՝ ջրածնին և փայտին ածխոյ հետ կը միաւորի: Բնութիւնը անմիջապէս այն եղանակաւ կը վարի պզտի աղջկան մը ներսի դին ջերմացընելու, ինչ եղանակաւ որ մարդը ձմեռ ատեն իր տունը կը ջերմացընէ:

Երեակայէ ուրեմն մէկ պզտի վառարան մը որ պզտի թե ունենայ, որպէս զի կողովին մէջէն կարենայ պէտք եղածին պէս փայտ առնել, և պզտի սրունքներ ալ, որ կողովը պարպածին պէս կարենայ երթալ լեցընել զայն. այս կերպով կրակը միշտ վառ մնալու է, և միշտ ջերմին ըլլալու է:

Այդ պզտի վառարանը դու ես. և քու բերանդ՝ այն պզտի դուռն է, ուսկից անդադար ներսդ կը մտնէ, ոչ փայտը, որ զուարճալի բան մը ըլլալ չըկըր-